

ՊԱՏՈՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար	12 ձր
Տարեկան	6 »
Վեցամսեայ	»
Մասնատար համար	15 »
Վեցամսեայ	8 »

Սերիկայի համար	3 շր.
Տարեկան	4.50 »
Վեցամսեայ	»

Ծանուցում սոյոք առաջին և երկրորդ համար 40 և իսկ վերջին և երեսն համար 20 սանթիմէ և երեք հին աւելի անգամներու համար 20 0/0 գնիչ կրի

Վարձայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՍՆԱԿԻ ԿՐԻՄԻԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐ ՏՄԵՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՈՒԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և զբոսը դրին ևս մարտնչական ևս գին:

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Մասնատարի համար

20 ՊԱՆԹՈՒՄ ()

Պուշկարիոյ համար

15 ՊԱՆԹՈՒՄ ()

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇՆԱԲԱԹ»-Ի ՊԱՏՈՆՈՐԴՈՒՄԻ ԳՐՈՒՄԸ, ԲՍՏՆԵԿԻՆԸ ՊԵՏԲ Ե ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՃԱՄԲԱՆ

... Բեզի կը կատարէր, ո՛վ Ստեփանի:

Մեր նախածքներուն մէջ դժոխքից հրդեհները դիր

Ու մեր ձայնին մէջ մոռնչներդ ահարկու:

Մեր բաղուկներուն մէջ կործանումից ուժը:

Ու մեր սրբերուն մէջ թոյնիդ սահանքները հոսեցուր:

Որպէս զի իժեր ու վագրեր գարձած

Բարենք քեզի կետ

Ի՛նչպիսի պարանքները Ոճրագործութեան:

Մեր որբ ճակատին

Աստուծոյ երկաթէ պարիսպներուն

Մոլորեցորէն բաղիւրու...

Գուցէ տարօրինակ թուի ընթացողներուն Ատելութեան պաշտամունքը. անոր ուժին կարկառիլը. բայց երբ առաքիլն ու թիւնները փոխանակ ցեղ մը ազնուացնելու՝ անոր ստրկանալուն պատճառները կը դառնան, այն ատեն ոչ միայն անհրաժեշտ այլ և գերագոյն առաքիլութիւն մըն է, բոլոր առաքիլութիւնները մէկտէր գնելը:

Աւազակ Բիւրտան ու թափառիկ Չէրքէզը քրիստոնէական առաքիլութեան զուրկ ըլլալով կրցան ազատ ապրիլ. իսկ մենք մեր առաքիլութիւններով անոնց ծառայելով, խոհարարները, մատուակները և անպաշտպան զոհերը եղանք. Բարեբաղդաբար ունեցանք և ունինք սերունդներ, որոնք գիտակցեցան և իրենց ոսկորներով ճամբաներ հարթեցին զէպի ընդհարումներու վայրերը աքսորուած Ալաւտութիւնը, մեր աւերակները յետ բերելու համար. Բայց ընդվզումի բոլոր շրջաններուն մէջ չեղաւ վայրկեան մը, որ մենք ազգովին մեր նահատակներու ու կորններուն վրայէն քաշել ու խտէինք. և ատոր համար ալ Ալաւտութիւնը յետ բերելու գաչող թափորները բախումներու ճամբաներուն վրայ մեռան:

Ոսկայն այս ընդհանուր սարսափի ու սուգի օրերուն մէջ, երբ մենք ամենէն անտարբերի սիրտն անգամ ցաւէն ու զայրոյթէն կը գալարուի, Յիսուսին հետ չէ՛ անշուշտ սր պիտի շարունակենք քաշել սիրոյ ճամբաներէն եղբայրութեան բարձրանները խնկարկելով մեզ յորտու թշնամիներուն: Ա՛յ, այս սուգի օրերուն մէջ ատելութիւնն է, որ մեզի պիտի ընկերանայ ընդհարումներուն և բաղիւրումներու ճամբաներուն վրայ: Ան է որ մեզի պիտի առաջնորդէ զէպի պալատները մարմարէ ու ապարանքները երկաթէ, ուր անպատիժ ոճրագործները ու գողերը բովանդակ Հայ ցեղի մահափոխը կը կնքեն: Ան է որ մեզի պիտի հանէ պատնէշներուն և պարիսպներուն վրայ վրէժի կատաղի երգերը անդառնալիորէն հնչեցնելու համար:

Վերջապէս ա՛ն է որ մեր ազգային ու խտի թափորը գէպի ազատութեան աքսորավայրը արշայտներուն մէջէն պիտի հասցնէ:

Բուսկան է, որքան սիրոյ ճամբաներէն քաշեցինք ու մեզի ապաակողներուն, կեղեքողներուն և մորթողներուն ձեռքերը համբուրելու ստիպուեցանք. այժմ գերագոյն ժամանակն է որ ատելութեան ճամբաներէն քաշենք, որպէսզի մեր վրայ բարձրացող ձեռքերը կարող ըլլանք կտրելու:

4 Հոկտ. 1903
Վառնա

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Մեծ են եւրոպական քաղաքակրթութեան ծնած բարիքները հասարակական կեանքի մէջ կրթութեան, դաստիարակութեան, գիտութիւններու տարածում, որոնց հետ կապուած է և մոլորվող մը բարոյական և տնտեսական բարձրացումը: Աստիք մի առ մի քննել և անոնց կարե-

ւորութիւնը ցոյց տալ շատ օգտակար գործ կըլլար, մանաւանդ հայերու համար, որ դեռ շատ ետ մնացած ժողովուրդ մը է ընդհայնապէս, սակայն այս կը հեռացնէ մեզ մեր նպատակէն. հոս կը բաւականանանք մենք ընթացող հասարակութեան ու շագրութեան յանձնել քաղաքակրթութեան մի մեծ գործօնը՝ դպրոցը:

Բուլղարահայ գաղութը եթէ կուզէ իր գոյութիւնը իբրեւ ինքնուրոյն տարր պահպանել և չը կլանուի կեանքի կոտորմէջ, եթէ կուզէ յաջող կերպով մրցիլ տիրոջ տարրին հետ և քիչ ժամանակ յետոյ չը կոչուի հայազաւան Բուլղարներ, ինչպէս այսօր Լեհաստանի հայերը, այն ատեն պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնէ կրթական գործին վրայ և կազմակերպէ իր դպրոցները, որոնք ցաւ է մեզ ըսելու այսօր անկերպարան վիճակի մէջ կը գտնուին և դրուած են խախտու հիմքու վրայ:

Ինչ միջոցներ պէտք են մեր դպրոցները հաստատուն հիմքու վրայ դնելու համար: Այս միջոցները զանազան են, որոնց վրայ անգրագիտանալու մեզ դեռ առիթ կը ներկայանայ, բայց հոս մատնանիչ ընենք էն կարեւորները. ժողովուրդը պէտք է մինչև հիմայ եղածէն աւելի հետաքրքրուի իր դպրոցներով և առողջ պահէ անոր ջիղը, այսինքն ստեղծէ հաստատուն և կրկիկ պիտոճէ մը: Իսկ այս ընելու համար պէտք է միայն բարիկամեցողութիւն և գործը յաջող կերպով պիտի քալէ:

Ռուսիա կովկասի մեր դպրոցները գրաւած ատեն կը յուսար, որ անոնց ամէն մէկը խոշոր գումարներ ունի իր տրամադրութեան տակ, որ այդքան լաւ կը կառավարուի: Սակայն Յարիկաւաւարութիւնը յուսախաբ եղաւ. տեսնելով որ անոնք միայն ժողովրդի կամաւոր նուէրներով է, որ այդպէս ծաղկած գրութեան հասած են, նոյնը կարող է ընել

նաեւ պուլկարահայ գաղութը: Այն ատեն դիւրին կըլլայ նաեւ հրաւիրել ուսուցչական կարող ուժեր և գործին տալ լաւ ուղղութիւն: Իհարկէ այս ամէնը ընելու համար պէտք է որոշ գոհողութիւն յանձն անելով մեր երիտասարդութիւնը և զիտակից տարրը ասպարէզ իջնէ և գործէ, փոխանակ իր ուժը անտեղի քայքայելու մէջ սպառելու:

Դպրոցական գործերու զեկը եւրոպայի մէջ կը գտնուի մանկավարժ մասնագէտներու ձեռքը:

Մեր դպրոցները կը զեկաճարուին ժողովուրդէն ընտրուած հոգաբարձութեան մը կողմէ, որը սակայն չի կարող ունենալ մանկավարժական մասնագիտութիւն և անկարող է հասկնալ դպրոցի մը բոլոր պահանջները և ընտրել յարմար և պաշտօնին գիտակից ուսուցչական մարմին մը: Ասկէ զատ կան ուրիշ ցաւեր: Ամէն տարի կը փոխուին ուսուցիչները: սիւսկական պաշտօնավարութիւն մը չունին նաեւ հոգաբարձութիւնները և ահա այսպէս կրթական գործը կը կազայ Բուլղարահայոց մէջ: Ու մեր առաջարկը գոնէ այսուհետեւ լրջօրէն ուշադրութիւն դարձնել դպրոցներու վրայ կը դառնայ աւելի ստիպողական, աւելի անյետաձգելի. գործերու ներկայ գրութիւնը եթէ երկար շարունակուի մեզ գէպի կորուստ կը տանի:

Մասնատրելով մեր խօսքը Վառնայի դպրոցներուն վրայ, պէտք է ըսենք որ հոս ալ կան շատ պակասներ, պէտք է աշխատանք տնոնց մանկավարժութեան պահանջած ուղղութիւնը տալու համար:

Մոտ օրէն Վառնան պիտի ընտրէ նոր հոգաբարձութիւն. ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին միայն Բուլղարահայատակ հայերը: Մենք հասարակութեան ուշադրութիւնը դպրոցի պակասներուն վրայ դարձնելով յոյս ունինք, որ նա զեկավարուելով

միայն պարոցի շահերու տեսակետով կընտրէ իր պաշտօնին բարձրութեանը և ներութեանը գիտակից մի մարմին :

Եւ արդարեւ գարոցական կեանքի սկզբնական այս շրջանին մէջ դաւանհրաժեշտ է :

Մարգարէտներ

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼԻՍՏՆԵՐԸ

Տ Փ Խ Ի Ս

Գրաւուրը շարունակուում է. դորձակատարները, որոնց յանձնվում է այդ տխուր միսիան գնում են բոլոր հայ եկեղեցիները, վանքերը եւ հոգեւոր դպրոցները, նախապէս հրաւիրուած հոգեւորականներին, կամ կառավարիչներին յանձնելու իրենց կառավարած կալուածները եւ միշտ ու ամեն տեղ հանդիպում են վճռողական մերժման եւ վերջացում են ուժի դիմելով այդ կալուածներին տիրանալու համար :

Մի քանի տեղերում ամբողջ հաւաքով ընդգրկուած եւ դիմադրուում է. ոստիկանութիւնը, կողակները միջամտում են, ու արեւն հոսում է :

Բազում հայերը բազմութեամբ հաւաքվել էին եկեղեցում այդ յափշտակուածի գէժ ընդգրկուած համար. նահանգապետը պատուաւոր խօսք է տալիս որ եթէ եկեղեցուց դուրս գան ոչ ոք իրենց պէտք է դիպչի, ամբողջ հէնց որ դուրս է գալիս, զօրքը կրակ է անում նրանց վրա... Ահա թէ ինչո՞ւն կովկասի ողու կառավարիչները յարգում են իրենց պատիւը :

Տփլիսի մէջ վիտուս են կողակներ, ժանտարիւնք եւ ոստիկաններ. նրանք խոնվում են մայր եկեղեցու, Ներսէսեան դպրոցի շուրջը եւ սրանց մօտակայ փողոցներում. Բազաքը պատերազմական բանակատեղի կերպարանք է ստացել. էջմիածինը շրջապատված է զօրքերով. նոյն իսկ թնդանութիւնը են բերել. եւ այս բոլոր գինւորական ուժը գործ է դրվում մի եկեղեցու, վանքի հանդէպ, ուր կան միայն կուսակրօններ եւ դեռաւոր դպրոցականներ, թէեւ պատերազմական այս տեսարանը բոլորովին սարսափ չէ ազդում ոչ հայ հոգեւորականութեան եւ ոչ էլ ժողովրդին : Բոլոր հայերը, կաթողիկոսից սկսած մինչեւ վերջին գիւղացին պնդում են իրենց մերժողական պատասխանի վրա. շքեղունիլ ողու կառավարութեան այդ վայրենի տնօրէնութիւնը :

Վարդապետոււմ եւ Երեւանում հայերը գոցել են բոլոր այն խանութները, որոնք պատկանում են եկեղեցուն : Սրբ գրաւելու պաշտօն ունեցող գործակալները եկել են, հայերը նրանց պատասխանել են, «Մենք մեռնելու պատրաստ ենք, բայց մեր կամքով երբէք մեր եկեղեցու կալուածները ձեռք չենք յանձնի» : Հայերը սեւ դրօշակներ էին կախել խանութների ճակատներին, կախել էին նոյնպէս ոստիկանութեան դռան տակը :

Իշխան Գալիցիան նահանգապետներին հրաման է ուղարկել մահմետականներին զինել եւ հայերին ջարդել գրգել : Բայց մահմետականները մերժելու են հնազանդել այդ հրէշային հրամանին : Ընդհակառակը նրանք

յայտնապէս իրենց համակրութիւնն են յայտնել Հայերին : Եւ մի քանի տեղերում էլ, ինչպէս Շուշում, միացել են Հայերին յափշտակիչներին դիմադրելու համար :

Երեւանում մահմետականները Հայերի պէս իրեն խանութները գոցել էին : Եւ այս շահ բնական է. որովհետեւ ողու կառավարութիւնը արդէն տիրացել է մահմետական մզկիթներին եւ դպրոցներին կալուածների վարչութեան, ամենքին յայտնի է թէ այդ կալուածները ինչպէս են կառավարվում : Թուս կառավարիչը մահմետականներին նոյն իսկ մերժում է տալ յայտնի եւ ճարտարապետի գլուխ գործոց մզկիթները նորոգելու անհրաժեշտ դրամը, որոնց բոլորովին խորտակուած է սպանում : Եւ այս բոլորը կատարում է մի կառավարութիւնը, որը աւետարանով ներշնչելու յաւակնութիւնը ունի եւ ինքզինքը քրիստոնեաների պաշտպան է անւանում :

«Աշտոսպիկն» թիւ 87

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԲՈՂՈՎԱԳԻՐԸ

Լաւուկեհիէն թարգմանաբար կը հրատարակենք իր ամբողջութեամբը Կ. Պոլսոյ հայ եպիսկոպոսներու Կաթողիկոսին ուղղած ընդգազարիչ պատճէնը եկեղեցական կալուածներու գրաւման առթիւ :

Սոնարհարար կը համբուրենք Ձեր սուրբ Աջը, յայտնելով մեր խորին յարգանքի և սրտաբոխ բաղձանաց հաւատարմքը Ձեզ, Մկրտիչ Ա. սըրբազանագոյն եւ վեհափառ Հայրապետ մեր եւ գերագոյն Պատրիարք ամենայն Հայոց :

Մեր անաքիական սուրբ եւ ուղղափառ Հայաստանեայց Եկեղեցին, երկնային նախախնամութեան անքննելի մէջ խորհրդովը գարեբէ ի վեր անլուր տանջանքներու եւ վշտերու ենթարկուած եւ այլեւայլ կողմերէ յարձակումներ կրած, այդու իսկ վարժեցուցած է իր հաւատացեալները եւ սպասաւորները քրիստոնէական երկայնամտութեան եւ օրինական ինքնապաշտպանութեան, ճշմամարիտ հաւատոյ անխախտ հաւատարմութեամբ որ քարոզուեցաւ առաքեալներէն ու լուսաւորիչներէն եւ հայրապետներէն ու վարդապետներէն հաստատուած կանոններու սահմանին մէջ :

Այս անխախտի սկզբունքներէն առաջնորդուած, մենք, ստորագրեալքս, Պոլսոյ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցոյ եպիսկոպոսներս որ ի Կ. Պոլսոյ հաւաքեալ, էջմիածնայ առաքելական աթոռոյն օրինաւոր զաւակուածքը որ անոր հանդէպ հաստատութեան երզում տուած ենք, կը համարձակինք Ձեր Սրբութեան յայտնելու ամենախոր ցաւով վերջերս մեզ հասնող լեւրերուն ներշնչած զգացումները : Որովհետեւ օտար երկիրներէ եկած եւ մեր մայրաքաղաքին մէջ հրատարակուող թերթերուն մէջ կը վարդանք որ, անսպասելի օրէնքով մը եւ ողու կառավարութեան նախարարական մէկ կանոնադրով հրամայուած է կաթողիկոսական աթոռէն եւ Թուսիոյ բոլոր հայ եկեղեցական իշխանութիւններէն իւրեւանշարժ կազմակերպելու, եկամուտները, սեփականութիւնները Ս. էջմիածնի առաջնորդութեանց, եկեղեցիներու, վանքերու, հոգեւոր դպրոցներու եւ բոլոր կրօնական, մարդասիրական եւ դպրոցական հաստատութեանց անունով արձանագրուած գումարները կառավարելու իրաւունքը, եւ գրաւելու փոխանցելու քաղաքային իշխանութեան եւ պետական նախարարութեան, ամենայն թիւններուն թոյլտուութիւն ընելու, որովհետեւ միայն այսպէս կարելի է պաշտպանելու իրաւունքը, որ մեր ստիպուեցանք օգոստոս 5ին ի նիստ գումարել խորհրդակցելու և ներկայ գրութեամբ յայտնելու համար մեր տեսութիւններն ու պահանջները, յանուն մեր և միւս եպիսկոպոսաց, որոնք մեր եղբայրներն են :

Յայտնելով Ձեր Սրբութեան կողմէ պաշտօնական ու վաւերական ոչինչ շնորհներէք. թող ներուի մեզ հոս ըսել կատարուած անկեղծութեամբ որ մեր սիրտը վշտացած է այս տարօրինակ լուծումէն, զի մեր գերագոյն պատրիարքութեան հասած ոչ մէկ միջադէպ կամ արկած պէտք չէ ծածկուած միայ իր եպիսկոպոսներէն և մահաւանգ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, որ մեր Հայաստանեայց հաւատարիմ հօտին ամենէն կարեւոր մասը կը կազմէ : Սակայն ամենօրեայ թերթերուն մէջ ծանուցուածները անհիմն չեն կրնար ըլլալ, և գերագոյն հրամանին բնազիրը չի կրնար ստայօք ըլլալ : Ասոր համար է որ ստիպուեցանք օգոստոս 5ին ի նիստ գումարել խորհրդակցելու և ներկայ գրութեամբ յայտնելու համար մեր տեսութիւններն ու պահանջները, յանուն մեր և միւս եպիսկոպոսաց, որոնք մեր եղբայրներն են :

Նախ և առաջ պատշաճ է յիշեցնել հայ ուղղափառ եկեղեցոյ սրբազան իրաւունքը — ինչպէս առ հասարակ բոլոր Եկեղեցիներուն — անշարժ կալուածներու, ինչքերու, եկամուտներու սեփականութեան և վարչութեան մասին. սեփականութիւններն են, զորս օտայան է ի սկզբանէ անտի, շնորհիւ բարեգործական նուիրատուութեան և ազնուականաց ու ծիսականաց ուխտագիր նուէրներուն, և պահած պաշտպանած ամենահին դարերէ սկսեալ, մինչեւ իսկ առաւանջներու և հալածանքներու շրջաններուն, զանոնք կառավարելով Եկեղեցոյ օրէնքներուն համեմատ և օգտակարապէս գործածելով համաձայն նուիրատուաց ըզձանքին :

(Շարունակելի)

ՀԱՅՍՍԱՍՆԻ ԵՒ ՄԱԿԵՂՈՒՆԻՑ ՀԱՄԱՐ

Խաղաղութեան Տիեզերական համաժողովը իր 12րդ. նիստին մէջ միաձայնութեամբ հետեւեալ որոշումները տուած է :

ՀԱՅՍՍԱՍՆԻ ՀԱՄԱՐ

Խաղաղութեան ժիւրգ. Տիեզերական Համաժողովը կը նորոգէ իր թրգ. Ժրգ. և Ժիւրգ. համաժողովներուն լիզէրը :

Գոհունակութեամբ նկատի առնելով իր Ժրգ. նիստին նախաձեռնութեամբ, Անգլիոյ, Ֆրանսայի և Թուսիոյ կողմէ ձեռք առնուած միջոցները Հայաստանի մէջ հիւպատոսներու թիւին յաւելման մասին :

Սակայն նկատելով որ այս միջոցը, թէեւ կրնայ խմբական ջարդերը մինչեւ աստիճան մը արգելել կամ յետաձգել, բայց

չի բուեր աստիճանաբար ոչնչացող ժողովուրդ մը փրկելու :

Համազուած որ Հայոց պահանջած տարրական բարեփոխումներն ու երաշխաւորութիւնները կրնան իրագործուիլ առանց Թուրքիոյ ամբողջութեան ունէ հարուած տալու, և նոյն իսկ թուրք ժողովուրդներուն շահը կը պահանջէ ընկերանալ բարեփոխման այս գործին :

Հիմնուելով Պերլինի Իտալիա գրին 61րդ. յօդուածին վրայ, որով Եւրոպա ինքզինքին իրաւունք տուած է և իր վրայ շարաք առած է հայ ժողովրդին կեանքը, անգործութիւնը, ճամբորդելու ապաստութիւնը, սեփականութիւնն ու խղճի ազատութիւնը ապահովելու :

Կը յայտարարէ թէ ժամանակն է, Եւրոպայի պատուոյն և մարդկութեան բարորութեան համար, որ այս յօդուածը ամբողջական ու անկեղծ գործադրութիւն մը ընդունի :

Ու կը հրաւիրէ քաղաքակիրթ կառավարութիւններն ու ժողովուրդները կարելի եղածին չափ շուտով գործել 1895ի յիշատակագրին ուղղութեամբ, խտացեալ միջամտութիւնով մը, որ պէտքի վերջ տրուի անհանգուրձելի և ընդհանուր խաղաղութեան համար վաանգաւոր զիջակի մը :

ՄԱԿԵՂՈՒՆԻՑ ՀԱՄԱՐ

Խաղաղութեան ժիւրգ. Համաժողովը նկատի առնելով Մակեդոնիոյ գէպեքերուն յարձուած ծանրութիւնը որ վտանգ պիտի ծնի ընդհանուր խաղաղութեան համար :

Նկատելով որ եւրոպական պետութիւնները, Պերլինի Իտալիա գրին 23րդ. յօդուածով համարախորէն իրենց վրայ առած են թուրք կառավարութեան, իր եւրոպական նահանգներուն խառն բնակչութեան համար անհրաժեշտ բարեփոխումները ձեռք բերելու :

Նկատելով որ իրենց տիրական պարտականութիւնն է արիւնի յեղումը արգելել. ստիպողական կոչ մը կուզէ քաղաքակիրթ ազգութեանց, և ի մասնաւորէ Պերլինի զաշնագրի ըստօրագրող պետութեանց, որ անյապաղ վերջ մը գնեն բնաշնջումին :

Համաժողովին անգամները ասկէ վտա յանձն կառնեն բոլոր իրենց ճիւղը թափելու, որպէսզի պետութեանց ուղղիւ այս կողմ լսելի ըլլայ անոնցմէ :

Համաժողովը կը յիշեցնէ նաեւ թէ Սան-Սթեֆանոյի դաշնագիրը իբր հիմ կընդունէր բնակչութեանց ազատութիւն իրենց փոճակը որոշելու իրաւունքը :

«Պո Արճեհիստ»

ՖԻԼԻՊԻԵՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Քաղաքի հայերու կողմէ ի նպաստ մակեդոնացի գաղթականներուն տրուելիք երեկոյթը — ինչպէս բաժնէ էր — տեղի ունեցաւ ամսոյ 27ի շաբաթ զիշեր :

Թատրոնի մէջ անցուցարձը անկարելի ընելու աստիճան լեցուած էր թաղմութիւնը, որոնց մէջ կային պուլկարներ ալ քիչ թիւով :

Երեկոյթի առաջին մասին մէջ նուագեց գինեւորական միջոցառումները : Երգեցիկ խումբը երգեց Վախաղանս և Մարտի դաշտը իսկ Օր. Թօգաթլեան՝ գաշնակով նուագեց ելիու կտորներ : Ամենքն ալ յաջող էին և բուն ծախերու արժանացան : Չի մոռնամ ըսել որ Պ. Անդրէաս Յակոբեանն ալ ամեն — պաքէն երկար բանաստեղծութիւն մը ըրաւ պուլկարներէն լեզուով :

Երեկոյթին երկրորդ մասը, որ կը կազմէր Արիւնոտ Հարսնիքի ներկայացումը, իր ընդհանուր գծերով յաջող դուրս եկաւ, չի նայած որ մէկ երկու դերակատարներ առաջին անգամ բնի դուրս կուգային, իսկ պակասող դերակատարներու դերերն ալ նորեր առած էին : Չէ կարելի վեր չի հանել Օր. Նուարզ Չէքոտրեանի ունեցած յաջողութիւնը :

Ներկայացումը շատ լաւ տպաւորութիւն թողոց : Թողունք հայերը, որոնք կը հասկնան և նիւթն ալ սրտերուն շատ մօտիկ է, պուլկարներն անգամ շատ գոհ մնացին : Իրողութիւն է որ աս գիշերուան երեկոյթին յաջողութիւնը Մասնախումբը կը պարտիք երգեցիկ թատր. խումբին, կրցաւ արդեօք նկատել կամ զիտնալ ասի, չեմ ուզեր հոս դիտել տալ...

Հաւանական կը կարծուի որ զուտ հասոյթը 6-700 լէվ ըլլայ, և լսածին ալ նայելով մեր հարուստները մտադիր են եղեր զուտը հասցնել 1000ի : Եթէ ճիշտ է, շատ պատուաբեր գործ մըն է որ կընեն :

Ամեն պարագայի մէջ, հայելու այս ձեռնարկը շատ գոհ ձգած է պուլկար տարրը :

Դիտողութիւն մը սակայն երեկոյթին մէկ ձախող կողմին :

Երեկոյթը իր ամբողջութեամբ միջ շատ գոհ պիտի թողուր մեզ և ալ աւելի պատուարեր պիտի ըլլար, եթէ գոյութիւն չուենար Պ. Անդրէաս Յակոբեան՝ բանաստեղծութիւնը :

Պարոնը պուլկարութեան հասցընելու չափ երբ որու իր բանաստեղծութիւնը, երբ անդին չորս արարուած ներկայացումը կար արուելիք, որուն դերակատարներուն հոգին «չաթալ» չլի վերջապէս «յնքան երկար սպասելու համար հաջուած», քրտինքներու մէջ թաթախուած, և պատճառեղաւ որ ներկայացումը ՎԷ անցած սկսի, 1 կամ 2 ին վերջանայ...

Արդէն սխալ մըն էր Պ. Անդրէասը հոն հրաւիրելը — երբ անոր և Կարաբախեանի հետ՝ հայտնաբերուող փորձուած է — որով պաղ ջուր լեցուեցաւ երեկոյթին ալ, մեր՝ հայերուս գլխուն գալ :

Երեկոյթին նպատակին առթիւ ըսելիքը քանի մը խօսքով կարելի էր յայտնել, կամ եթէ խօսող մը չի կար, գրի առնել ու կարգալ : Հարկ չի կար Պ. Անդրէասը հրաւիրել, որ զայ հոն, սար որ ձոր դեգերի, նեղ հաշիւներով աս ան խածմանտէ, իր կսմիթները հասցնէ մինչև պուլկար կուսակցութիւնները, մինչև ներկայ գինեւորական պատրաստութիւնները և վերջապէս՝ մինչև Մակեդոնական և Հայկական յեղափոխութիւնը...

Համակրանք ստեղծելու միտք ունինք թէ՛ հակակրանք :

Մէկ խօսքով, մեր երեկոյթները անոր հայեացքներուն փրփուկանտախին տեղը չէ, ուրիշ մեղի մնաւ կայ, ո՛չ թէ օգուտ :

Ան թող պուլկարներէն լեզուի ուսուցչութիւնը միայն ընէ մեր մանուկներուն, անոր մեղի ունենալիք

օգնութիւնը հոս կը կայանայ :

Ու է խօսք չընէի թերեւս — ինչպէս բնաւ կարեւորութիւն չէ տրուած թերթերու մէջ իր գրած պոետախօսութիւններուն, քաջ գիտցուելով «ձայնին որմէ» կամ ուրիշ գալը : Հակառակ պարագային ազգայնական հոգի վրայ չը կեցող Պ. Անդրէասին գրածները միայն իր անհասական կեանքով կարելի էր ջրել — ու է խօսք չընէի թերեւս կըսեմ, եթէ ասանկ նպատակի մը առթիւ սարքած երեկոյթի մէջ խօսած չըլլար, ուր պուլկարները դժգոհ մնացին, և թերեւս ալ կարծեցին թէ հայերուն կարծիքներն են անոնք :

Եթէ պուլկարներէն գրել գիտնայի, ևս կըլլայի առաջին հերքողը այն կարծիքները, որոնք մերը չեն, ցոյց տալու համար որ մենք ալ չենք կըլլեր Պ. Յակոբեանի յաւակնոտ և դատարկ «Փրփուկները» :

Քանի մը խօսք ալ մեր դերակատարներուն :

Մեր դերակատարներէն դերասանական նուրբ ու լաւ ձեւեր չենք կրնար պահանջել, և ատոր շատ ալ պէտք չի կայ, երբ ներկայացումները առնուած ըլլան հայ ներկայ կեանքին, բայց կրնանք և իրաւունք ունինք պահանջելու որ, դերերն ինչ լաւ սորվին, յետոյ լաւ հասկնան :

Արիւնոտ Հարսնիքի հայդուկներու տեսարանին մէջ քիչ մը խեղճ գաղափար կազմել տուին շխտակր — գոնէ հասկցողներուն — իրենց՝ դերակատարներու՝ հասկացողութեան վրայ : Խմբապետին ա՛յնքան գեղեցիկ խօսքերը մտիկ ընելու և իրենք ալ նոյն զգացումները արտայայտելու տեղ, իրենց զէնքերով կը խաղան, անոնք մաքրելով կը զգաղին և կամ քալելով խօսուածքները խանդարեալ աստիճան ազմուկ կը հանեն :

Ասոնք պակասութիւններ են որ ըսելու հարկ չի կայ և պէտք չէ որ կրկնուին : Մէկ անգամ չէ որ ներկայացում կուտայ երգեցիկ թատր. խումբը :

Հասարակութիւնը աս բաները չի նկատեր, նկատողները քիչեր են միայն : Խաղը, անոր կենդանութիւնը ա՛յնքան անոր սրտին մօտ է որ, ատ պակասութիւններուն ուշադրութիւն չի դարձներ, բայց իրենք՝ դերակատարները պէտք է որ դարձնեն : Թղթակից

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համայնական կրթութիւն ստացած երիտասարդ մը, որ զեռուրդա կը գտնուի, ուսուցչի պաշտօն կը դիտող հայ վարժարանի մը մէջ :

Դիմել «Երաժու մի խմբագրութեան»


ԱԶԳԱՅԻՆ ԲՈՆՆԻԿ

Վառնայի ուսուցչական մարմինը վերջնականապէս կազմուած է, դասարանները կազմուած են և երկու շաբաթի դասախօսութիւնները կսկսին կանոնաւորապէս :

— Հայաստանի Օր. Ալիս - Թոն Պլէքուէլ իր ձեռնարկներով ամբարիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կազմած է «Հայաստանի Բարեկամներու» ընկերութիւն մը, որու նպատակն է ամերիկեան մամուլի մէջ արծարծել հայկական հարցը և զայն մտանք ծառայեցնել Ամերիկացիներուն : Ընկերութեան նախագահն է տիկին Ճուլիա Ուարզ Հաու, քարտուղարը Օր. Սթոն ինչը : Ընկերութեան կրնան միայն Ամերիկացիներ անգամակցել : Օր. քարտուղարը կը խնդրէ հայկական հարցի վերաբերեալ ճշգրիտ տեղեկութիւններ և հայ կեանքի վրայ ուսումնասիրութիւններ հաղորդել իրեն անգղիականները լծած իրենց եզները, հնաւանդ մաճը ձեռքերնին երկար սկսուներով կը բանան ու Սեւ բարեբեր հողին մայրական կուրծքը, նորաբողոք ծիրաններ, երկար ու մատաղ սօսին երգեստաւորուած են զարնան առաջին կանաչով, երբեք սեղ մը այնքան մաքուր օդ չեմ ծըծած, ինչպէս այն օր Արաքսի հովտին մէջ, հովիտ լեցուած լոյսով և բուրմունքով, թռչուններու զուարթ զողգողով և առուններու մեղմ կարկաչով : Յիշողութեան մէջ միայն մի բան կարող իմ համեմատել այս բոլորի հետ :

Գողանտ կղզիին վրայ ես նստած էի անգամ մը՝ բարձր և ձիգ ապանաթի մը գաղաթը Պալթիկ ծովուն եղերքը : Իմ առջեւ էր հին Վիպին, վարձ կալիկոնուէր ծովը անգիրն գողողով, ձերմակ փրփուրներ կը ծծէին քարափը և կը թնթացնէին չրջակայքը, Հոն և հոս հասկցայ ես թէ՛ հին սագերը ինչու՞ անուանած են օղը տարրերային մի ոյթ — որովհետեւ անոր մէջէն կանցնի կեանքի ոյթեղ հոսանք մը...

Փոխադր. — Մարգարէտի (Շարունակեցի)



ԲԱՆԱՍԻՐՎԱԾՆ

ՀԱՅԿ - ԽՐԴՅՐԱԻԱՆԳՎԱԿԸ ԵՒ ԱՆԻ

(Ճանապարհորդական Արիւնոտի ծոց, Բորբախի)

Ի բրմանացի գիտնական Տօր. Պաուլ Բորբախ քանիցս ճանապարհորդած է ամբողջ Հայաստանը, կողկասէն մինչև Միջրկարական ծով և օւսումնասիրած Հայոց աշխարհը : Նա ունի զիտող աչքեր և նկարագրելու չնորձք : Ինք կը սիրէ հայերը և կը համակրի անոնց իրբեւ քաղաքակրթութեան ընդունակ տարր առաջաւոր Ասիոյ մէջ : Առաջին ճամբորդութեամբ մը ուսումնասիրած է Բորբախ Ռուսական Հայաստանը, յետոյ Բրքականը : Մենք սակեւող չենք համարեր առաջին ճամբորդութենէն գլուխ մը թարգմանաբար ներկայացնել մեր ընթերցողներուն, նիւթը հնաաբարական և հայի սրտին մօտիկ ըլլալուն համար մեր թարգմանութիւնը կը լինի ազատ : Ահա այդ զուտը :

ՀԱՅԿ. ԲԱՐՉՐԱԻԱՆԳՎԱԿԸ ԵՒ ԱՆԻ

Երեկոյթին եւ այնքան ինչ Անի անուանակները, որոնք ամէն հայի սրտին այնքան թանկ են իբրեւ մեծագոյն և պիտեմաս վկաներ իրենց

հպարտ ու փառաւոր անցեալին, Բարձրասունի թագաւորներու մայրաքաղաքը կը գտնուի Երազի բարձրաւանդակի վրայ : Մենք Աղէքսանդրապօլի վրայէն գացինք, այսինքն ճամբանիս երկնցւոյնք : Ասկէ Անի 170 քիլոմէթր է — երկու քուկէս օրուան ճամբայ, Ես մտադիր էի ձիով երթալ, որովհետեւ մեծ ճանապարհը էջմիածինէն անդին կը դադրի և անոր համեմատ քիչ իրեցններ վերցուցի : Ինձ արդէն ըսուած էր, որ երեւանէն անդին կառքով երթալը դժուար է. բայց վանքին մէջ զիս համոզեցին կառքով երթալ և ընկերանալ Աղէքսանդրապօլի հայ քահանայի մը, որ եկած էր Կաթողիկոսէն Ս. Միւսոն առնել, Մեր կառքը կովկասեան «Փայթօն» մըն էր հանգրիտ նիստով և ուժեղ անիւներով : Սովորական անիւներ չեն կարող գիմանալ, ճամբան շատ դժուար է : Բարձրաւանդակին վրայ պէտք է չորս ձի ընել : Մեր կառքապանը թէեւ հայ, բայց հազուած էր ուս կառքապաններու տարազով : Այս տեսակ կառքեր կարելի է ձա ժամուան համար 10-12 ֆրանքով վարձել, որովհետեւ ձի մը հոս հաղիւ արժէ 40-50 րուբլի, աս ժամ է նաեւ իրար : Կառքապանը իրեն և ձիուն համար պաշար արդէն հետը կը վերցնէ : Բայց երբ ճանապարհորդը անոր կը կայանայ :

պարհորդը անոր հաց, գինի, հակիթ եւ այլ-հարմարեք, ինչպէս մենք ըրինք, նա չնորհակալութիւն յայտնելով կը ընդունի :

Առաւօտուն կանուխ պէտք էր ճամբայ ելլելիք, բայց հիւրասէր վանքը մեզ այնքան շատ կերակուրներ և խմելիքներ տուաւ, որոնց տեղաւորելը արդէն բաւական սեւեւաց, յետոյ պէտք էր խուցէ խուց պատիւ և հրամանատր ողջոյն առնել անոր բնակիչներէն, զորս ես մօտէն ճանչցայ : Գահանան կեր կառքին մէջ տեղաւորուեցաւ : Երկու վարդապետներ ճամբուն մի մասը ինձ հետ եկան վանապատկան կառքով մը, վանքի գուռնէն դուրս ելլելով Վարչապատի կանաչ դաշտերուն մէջ մենք ողջունեցինք հայկական դասերուն՝ պայծառ և ջինջ : Արագած՝ ծածկուած յաւիտենական ձիւնով և ցցած իր հակառակ գլուխները զէպի հիւսիսային երկինք մեզ ուղղութիւն կուտար : Զիւնապատ լեռներու ոտքերու սակ՝ ընդարձակ դաշտալայրերու մէջ կեռայ ծլած ու ծաղկած կեանք մը, բնութիւնը մանկացած է : Կայտառ զետակներու բարի կարկաչելով կը վազեն քէպի վարձ սփռելով իրենց ճամբուն վրայ թռչողութիւն ու կեանք, դառնելով դաշտեր ու այգիներ : Անգին ձայն

լիերէն, ֆրանսերէն կամ հայերէն լեզուներով: Ընկերութեան հասցէն է.

Միս Ալիս Սթօն Պլէքուէլ
45 Պաուլուէլ Էվլընի
Տօրչէսթըր, մաս
(Ու. Ս. Ա.)

— «Հայրենիք» թերթը սկսած է նշանակոր յեղափոխական գործիչ Քեռիի վրայ կենսագրական հետաքրքիր յօդուածներու շարք մը հրատարակել:

— «Նօվ. Վրէմա» կը հաղորդէ, որ Երեւանեան գծի Սարգսպաշ կայարանի մէջ Ստեփան անուն հայ մը յեղափոխականներու կողմէ ենթարկուած է տէրօրի: Սպաննոցները պաշտ են:

— Ամերիկայի մէջ ամէն տեղ, ուր որ հայ գաղութ կայ կազմուած են ժողովներ (Խոսիոյ հայ եկեղեցական կալուածներու գըրաւման դէմ բողոքելու համար): Ինքուած է նաեւ Ամերիկայի կառավարութեան պաշտպան հանդիսանալ իրեն հպատակ հայոց իրաւունքներուն, զորս Ռոսիա ոտնակոխ կընէ:

— Քաղաքիս մէջ սկսած են կարգ մը տարաձայնութիւններ շրջիլ, և տեղական թերթ մըն ալ արձագանք եղած էր անոնց, որոց համեմատ իբր թէ պատրիարքարանը սեղոյս պատգամաւորական ընտրութիւնը բեկանած է, թէ պատրիարքարանէն հեռագրով հրահանգ եկած է ըսպասել կեդր վարչութեան հրահանգին, օւն: Կը յայտարարենք թէ այդ բոլորը բացարձակապէս սուտ հերիւրանքներ են յայտնի մարդոց կողմէ սարքուած որոնք նպատակ ունին հանդարդած ժողովրդին սիրտը պղտորել: Պատրիարքական օւն է հրահանգ ընտրութեան մասին, գոյութիւն չէ ունեցած և այցելու հովիւր Պալչըք գացած է լոկ ըստ պատրիարքական հրամանի քննելու համար Պալչըքի եկեղեցոյն ու դպրոցին յատակագիծը:

— Ասկէ առաջ Պալչըքի ազգայինները եկեղեցի մը և դպրոց մը ունենալու համար պատրիարքարան գիմած էին յատակագիծն ալ շրջելով: Ս. Պատրիարքը պատր. փոխանորդ հօր դարձնելով այդ յատակագիծը հրամայած էր էր անոր երթալ Պալչըք և տեղոյ քրայ քննութիւն կատարելով տեղեկագրել իրեն: Ըսն այսմ, Պատր. փոխանորդը անցեալները Պալչըքից և հարկ եղածը կատարեց: Ծիշտ չէր որ րիթ «Իրաւոնք» թերթին այն լուրը, թէ Հայր սուրբը օգափոխութեան գացած էր հոն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօֆիայի հակակառավարական կարեւոր թերթերը կը յայտարարեն թէ պատերազմի մը հաւանականութեան վրայ հիմնուած կառավարութիւնը 30 միլիոն ֆր. ծախսած է առանց նախարարաց ժողովին հարցնելու:

— «Բէօնիչէ Յայթունկ» կը կարծէ թէ Պուլկարիա ձմեռան յին արշաւանք մը պիտի գործէ Թուրքիոյ դէմ. որը նոյն իսկ պիտի վտանգէ Եւրոպայի խաղաղութեանը: Նոյն թերթը կը յայտնէ որ Բնգլիոյ վերջին յիշատակագիրը ամեն տեղ գոհունակութիւն յառաջ բերած է և որն իր առաւելութիւններով երկու պետութեանց ծրագրները մոռացութեան պիտի ենթարկէ և ստանայ մեծ կարեւորութիւն:

— Տէվէպէնի միջադէպը լուրջ հետեւանքներ չունեցաւ: Միայն Պուլկարիա այդ պատճառով վեց պահպարի գնդեր փոխադրեց սահմանագլուխ:

— Իշխանուհին կարեւոր գումարներ յատկացուցած է մակեդոնացի փախստականներուն համար:

— Նաչովիչ Դրան ուշագրութիւնը հրաւիրեց թուրք զօրքերու և սպաներու սահմանին վրայ կատարած յոխորտանքներուն և անկարգութիւններուն վրայ, թիւրք զինուորներ մտած են Պուլկարիոյ սահմանէն ներս և աւերած կարմանիցա գիւղը, վիրաւորած սահմանապահ զինուորներ:

Պուլկարիա կաթրացնէ իր սահմանները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Սթօնօմի» թերթին Կ. Պոլսէն կը գրեն թէ թիւրք զինուորներուն մէջ կը խօսուի դաւադրութեան մը մասին՝ Սուլթանը գահնկեց ընելու համար:

— Զինովիվ խիստ կերպով բողոքեց թիւրք զինուորներուն Մամեդոնիոյ մէջ կատարած խեղճութեանց դէմ: Սուլթանը իրատեով մը հրամայեց խնայել խաղաղ ազգաբնակչութեան, կանանց և երեխաներուն:

— Ռուսիոյ Պոլսոյ դեսպանը ետ զրկեր է Բ. Դրան վիրջին ծանուցագիրը, որով Մակեդոնիոյ շարգերուն մասին բացատրութիւններ կուտար: Դեսպանը հետեւեալ լակոնական արձանագրութիւնը բրած է ծանուցագրին վրայ «Ոչինչ և իբր չեղեալ նկատուած»:

— Սուլթանի և Ռուս պեսպանի միջեւ տեղի ունեցաւ տաք վիճարանութիւն: Սուլթանը կը

բողոքէ բարենորոգմանց միջոցին օտար հիւպատոսներու միջամտութեան և հսկողութեան դէմ և կուզէ պետութեանց ծրագիրը չեզոքացնել Պուլկարիոյ դէմ պատգրազմ հրատարակելով:

— Գերմանացի և ֆրանացի դրամատէրները Պաղտատի երկաթուղիի ծախքերը հոգալու համար համաձայնութեան մը եկած են: Վերապահելով սակայն իրենց կառավարութեանց ընելիք ապագայ առաջարկները ու դիտողութիւնները:

ՄԱԿԵՆՈՒՆԻՍ

Կատաղի կուրներ տեղի ունեցան Պալչէվօէ և Մէհօմիայի մօտ: Երկու գիւղերն ալ կրակի արուեցան: Բնակիչները կին և տղայ թիւրքերը սրէ անցուցին:

— Իերքին կազմակերպութիւնը սխալ կը հաշակէ թրքական ազբիւրէ բխած այն լուրը թէ ռազմամբութիւնը պիտի դադրի:

— Կպտամբներէն 970 հոգի յարձակո մ գործեցին թիւրքերու վրայ, տեղի ունեցաւ կատաղի կռիւ: Մակեդոնացիք յաղթեցին: Թիւրքերէն կան 74 մեռեալ, շատ վիրաւորեալներ: Կպտամբներէն 7 մեռեալ, 11 վիրաւոր:

— Բիրինի կուրէն շորս օր առաջ անոր մօտերը 40 յեղափոխականներ զարնուեցան թիւրք զինուորներու հետ, որոնց թիւը երթալով 300ի բարձրացած էր: Թիւրք ազբիւրներու տուած տեղեկութեանց նայելով սպաննուած են 200 զինուորներ: Յեղափոխականներէն ինկաւ մէկ հոգի և վիրաւորուեցաւ սպայ մը:

ՌՈՒՍԻՍ

Բակեդոնիոյ բարենորոգմանց վերջին յիշատակագրին առթիւ Դրան առած պատասխանը մեծ դժգոհութիւն առաջ բերած է Սուսիոյ մէջ: Թերթ մը կըսէ, որ թուրքիա հոս դուրս կուգայ նէնգութեան, կեղծիքի և ստութեան վերջին դէնքերով:

— Ռուսովի քաղաքապետի վրայ սպանութեան փորձ ըրաւ մի արձակուած պաշտօնեայ, բայց անյաջող:

— Ռուսիա երբէք սրամագիր չէ Մանչուրիան պարպել: «Ն. Վրէմի» կը պատճառաբանէ, որ սովի պատճառաւ չինացի աւազակային խումբեր մտած են Մանչուրիա և կը խանգարեն երկաթուղիի շինութիւնը, ուստի Ռուսիա կը յետաձգէ պարպելու խնդիրը:

Լօնտօնի ճարն դեսպանը լուր չէ ստացած լաբուած դրութեան մը մասին, իր կարծիքով պատերազմը եթէ բացուի մեծ փրսս:

ներ պիտի հասցնէ երկու կողմերուն ալ: Այս պարագային դեսպանը կը յուսայ որ անգլիա պիտի աջակցի ճարնիոյ շահերը պաշտպանելու համար:

ՍՊԱՆԻԱ

Պիպաս քայաքի մէջ հանրապետականները 2000 հոգի հաւաքուեցան և ցոյցեր ըրին, որոյ միջոցին կղերական թերթի մը խկթագրատան ապակիները վար առնուեցան: Ասկէ զատ քարկոծուեցան կրօնական հաստատութիւններ: Ոստիկանութիւն միջամտեց, վիրաւորուեցան 4 ոստիկաններ և սպայ մը: Ժողովուրդէն սպաննուեցան 5 հոգի, վիրաւորուեցան 29 հոգի: Կատարուեցան 14 ձերբակալութիւններ: Խաղաղութիւնը վերահաստատուեցաւ:

— Սպանիոյ թագաւորը այցելեց Լիզպօն, Բօրթօղայի և Սպանիոյ միջեւ մօտիկ յարաբերութիւններ մշակելու համար:

ԻՏԱԼԻԱ

Հռովմ Յարը ընդունելու համար պատրաստութիւններ կը տեսնէ. հակառակ այն տարաձայնութեանց, որ Յարը չպիտի երթալ:

Յարը իր փափաքին համեմատ կողակներով շրջապատուած ման պիտի գայ:

— Պապը ընդունած է 100 հունգարացի ուխտաւորներ և օրհնած զանոնք:

ՃՐԱՆՍԱ

Կաշխատուի Փրանսայի և Վնգլիոյ միջեւ ծագելիք վէճերը խաղաղութեամբ կարգադրելու համար հաշտարար ատեան մը հիմնել:

— Մարսիլիայի սօցիալիստներու ժողովը որոշումներ ընդունած է առաջարկել պետութեանց զլահաւորներու և քանակներու թիւը քիչցնելու համար:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐՆԻԵԼՔ

Ճարնացիք գրաւեցին Դորէսի մէջ Մազամֆօն:

— Ամերիկայ կը ցանկայ Զինաստանի մէջ երկու բաց նաւահանգիստներ ստանալ և ուրիշ խնդիրներու մէջ չեզոք մնալ:

ՕՏՎՈՐՆԻԿՆԷ

Мурадъ-Браносянъ

Педатнича, Взаимность, Варна